

ԳՆԵԼ ՍՈՒՂՆԵՑՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ-փաստաբան,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՎԵՃԵՐԻ
ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Հայաստանյան իրականությունում վարչական արդարադատությունը և վարչական դատավարությունը ՀՀ օրենսդրի կողմից իրավական կարգավորման ենթարկվեցին միայն 2007-2008 թվականներին: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ¹ այլևս իրողություն էր վարչական դատարանների կայացումը: Նշված նորմատիվ իրավական ակտի 3-րդ հոդվածի 4-րդ մասով վարչական դատարանը նախատեսված է որպես մասնագիտացված դատարան: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի² 4-րդ հոդվածով սահմանված նորմի համաձայն՝ օրենսգրքով նախատեսված Հայաստանի Հանրապետության դատարանները սկսում են գործել 2008 թվականի հունվարի 1-ից: 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունվեց ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը³, որով սահմանվեց հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի քննության կարգը՝ դրանով իսկ իրավական կարգավորման ենթարկելով վարչադատավարական գործընթացը⁴:

Վարչական արդարադատության և դատավարության կայացումից հետո էլ վարչադատավարական հիմնահարցերը դեռևս հավուր պատշաճի չեն ուսում-նասիրվել հայրենական իրավական գիտության շրջանակներում: Նշված հարցերի վերաբերյալ կան ընդամենը մի քանի տեսական աշխատություններ և հոդվածներ⁵, որոնց մի մասը նույնիսկ վերաբերվում է մինչ վարչադատավարական գործընթացի և վարչական դատարանների իրավական ամրագրումը եղած հարցերին, որոնք դատաիրավակիրառական պրակտիկայի կողմից առաջադրվող խնդիրների լուծման հետ կապված, ըստ էության, այլևս արդիական չեն: Իրավական կարգավորման մեխանիզմում վարչադատավարական ինստիտուտի կիրարկումը թե՛ պրակտիկ իրավաբաններին, թե՛ իրավագետներին առաջադրել է

որոշակի խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է միայն այդ խնդիրների՝ տեսական հարթությունում ուսումնասիրության առարկա դարձնելու և որոշակի մեթոդաբանության հիման վրա դրանց լուծման ուղիները մշակելու, ի հայտ բերելու միջոցով: Մեր պնդմամբ՝ սա միակ ընդունելի, ճիշտ ճանապարհն է վարչադատաիրավակիրառական պրակտիկայի կողմից առաջադրված խնդիրներն ուսումնասիրելու, վերլուծելու և գիտականորեն մշակված որոշակի հայեցակարգի (պարադիգմայի) հիման վրա վարչադատավարական ինստիտուտի կառուցողական, արդյունավետ զարգացումն ապահովելու հարցում: Դա կհանգեցնի նրան, որ վարչադատավարական ինստիտուտը իրավական կարգավորման կառուցակարգում հնարավորություն կունենա իրացնելու իր հիմնական գործառույթը՝ անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության գործընթացի արդյունավետ կարգի սահմանում:

Ինչևէ, ներկայումս դատաիրավակիրառական պրակտիկայում բացակայում է միասնական մոտեցումը վարչական դատարանների ենթակայության հարցի վերաբերյալ, ավելին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով ամրագրված դրույթների ոչ ճիշտ մեկնաբանությամբ պայմանավորված՝ երբեմն նույնիսկ ընդհանուր իրավասության դատարաններն են սխալմամբ մերժում անձանց հայցադիմումների ընդունումը՝ պատճառաբանելով, որ վեճերը ենթակա են ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը:

Նշված հարցի վերաբերյալ տարբեր, հաճախ իրարամերժ և հակասական մոտեցումները և դրա արդյունքում թույլ տրվող կամայական դատական սխալները լուրջ խոչընդոտներ են ստեղծում անձանց թե՛ հանրային սուբյեկտիվ, թե՛ մասնավոր սուբյեկտիվ իրավունքները դատական կարգով պաշտպանելու հարցում: Մասնավորապես, ՀՀ

www.lawinstitute.am

վարչական դատարանը մերժում է անձանց հայցերի ընդունումը՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ այդ հարցը վարչական դատարանի ենթակայության շրջանակներից դուրս է⁶։ Նույն հայցադիմումների ընդունումը (նույն իրավական ու փաստական հիմքերով և հայցի առարկան կազմող պահանջով) մերժվում է նաև ընդհանուր իրավասության դատարանների կողմից այն պատճառաբանությամբ, որ նշված վեճերն ենթակա են վարչական դատարանի քննությանը⁷։ Շատ դեպքերում հանրային իրավահարաբերություններից բխող վեճերը վարչական դատարանը սխալմամբ չի քննում՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ տվյալ վեճերը հանրային իրավահարաբերություններից բխող վեճեր չեն⁸։ Լինում են նաև հակառակ դեպքեր. մասնավոր հարաբերություններից բխող վեճերը ընդհանուր իրավասության դատարանը չի քննում՝ պատճառաբանելով, որ դրանք հանրային իրավահարաբերություններից բխող վեճեր են⁹։ ՀՀ վարչական դատարանի պրակտիկայում առկա են նաև իրարամերձ ակտեր՝ որոշակի վեճերի՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա լինելու հետ կապված¹⁰։

Երբեմն պատահում են դեպքեր, երբ ՀՀ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտեր է կայացնում այնպիսի վեճերի քննության արդյունքում, որոնք մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճեր են և վարչական դատարանի իրավասության շրջանակներից դուրս են¹¹։ Նույնաման դեպքեր են պատահում նաև ընդհանուր իրավասության դատարանների պրակտիկայում¹²։

Որոշ դեպքերում ՀՀ վարչական դատարանը և/կամ/ ընդհանուր իրավասության դատարանները հայցի առարկան կազմող փոխկապակցված պահանջների մի մասը քննում են, մյուս պահանջների մասով գործի վարույթը կարճում՝ պատճառաբանելով, որ այդ պահանջների մասով վեճի քննությունն իրենց իրավասության շրջանակներից դուրս է¹³։ ՀՀ վարչական դատարանների ենթակայության հարցի հետ կապված՝ թերի և ոչ ամբողջական պատկերացումներ առկա են ոչ միայն դատարանների անունից հանդես եկող պաշտոնատար անձանց՝ դատավորների մոտ, այլ նաև իրավակիրառական պրակտիկայում գործունեություն ծավալող այլ սուբյեկտների մոտ (փաստաբաններ, դատարաններում անձնանց շահերը ներկայացնող իրավաբաններ, գործադիր իշխանության մարմին-

ներ, տեղական ինքնակառավարման մարմիններ)։ Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ խնդիրը կրում է համակարգային բնույթ։

Ինչպես արդեն վերը նշվեց, մնան դատական պրակտիկայի առկայությունը պայմանավորված և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ պատճառներով։ Մասնավորապես, ՀՀ վարչադատավարական օրենսդրությամբ, ի տարբերություն այլ երկրների (Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա), սահմանված չեն այն նորմատիվ չափորոշիչները, որոնց հիման վրա արդարադատություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դատավարության մյուս սուբյեկտները կարող են պարզել կոնկրետ հարաբերության հանրային կամ մասնավոր բնույթը։ Սակայն, մեր խորին համոզմամբ, ելակետային գործոնը տվյալ պարագայում սուբյեկտիվ գործոնն է, քանի որ շատ հաճախ դատարանի անունից հանդես եկող պաշտոնատար անձինք, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայով զբաղվող մյուս սուբյեկտները չունեն իրավական աքսիոմատիկայի բավարար տեսական գիտելիք, որպեսզի կարողանան միմյանցից տարանջատել հանրային և մասնավոր հարաբերությունները և դրանցից բխող վեճերը։

Մեր կարծիքով դատարանների կողմից նշված հարցի վերաբերյալ միասնական ճիշտ պրակտիկայի ձևավորումը հիմք կհանդիսանա նաև այլ սուբյեկտների մոտ հարցի ճիշտ և ամբողջական ընկալման համար։

Ներկա իրադրության մեջ անձիք չեն կարողանում հավուր պատշաճի իրականացնել իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանությունը, ինչով էլ պայմանավորված՝ վարչադատավարական իրավական պաշտպանության միջոցը իրավական կարգավորման գործընթացում չի իրացնում իր հիմնական գործառույթը։ Նման պարագայում ավելի քան հրատապ է նշված խնդրի տեսական վերլուծությունը և դրա արդյունքում այն չափորոշիչների մշակումն ու ներկայացումը, որոնց շնորհիվ արդարադատություն իրականացնող սուբյեկտները, դատավարական հարաբերությունների մյուս մասնակիցները, ինչպես նաև այդ հարցով շահագրգիռ յուրաքաչյուր ոք, կկարողանա հանրային իրավահարաբերությունները (դրանցից բխող վեճերը) տարբերակել մասնավոր հարաբերություններից (դրանցից բխող վեճերից)։

ՀՀ վարչական դատավարության օրենսգր-

քի 8-րդ հոդվածով սահմանված է, որ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

- 1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը,
- 2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով,
- 3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը,
- 4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից:

Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

Նշված նորմի բառացի մեկնաբանության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ դրանում ներդրված իրական իմաստի վերհանման և հավուր պատշաճի դատական պրակտիկայում կիրառման համար անհրաժեշտ է պատկերացում կազմել «հանրային հարաբերություն» և «հանրային հարաբերությունից բխող վեճ»¹⁴ հասկացությունների վերաբերյալ:

1. Յուրաքանչյուր անգամ, որպեսզի դատարանը (ինչպես նաև վարչադատավարական հարաբերությունների մյուս սուբյեկտները) պարզի՝ արդյո՞ք վեճը բխում է հանրային իրավահարաբերությունից, թե ոչ, նախ պետք է պարզի իրավահարաբերության (որից բխել է վեճը)՝ հանրային լինելու հանգամանքը:

Նախ՝ հարկ ենք համարում նշել, որ իրավագիտության արքսիոմատիկ դրույթ է այն, որ իրավահարաբերությունը տարբերվում է այլ հասարակական հարաբերություններից նրանով, որ կարգավորման է ենթարկվում իրավական նորմերի միջո-

ցով¹⁵:

Այնուամենայնիվ, ցանկացած հարաբերություն, այդ թվում՝ իրավահարաբերությունը, ուսումնասիրվում է դինամիկ և ստատիկ վիճակներում:

Դինամիկ առումով հարաբերությունն իրենից ներկայացնում է հարաբերության սուբյեկտների միջև իրավական կապ, փոխգործունեություն, միմյանց նկատմամբ փոխազդեցություն: Ստատիկ առումով հարաբերությունն իրենից ներկայացնում է որպես սերտորեն փոխկապակցված որոշակի տարրերի (սուբյեկտ, օբյեկտ, բովանդակություն) մեկ ամբողջություն, ինստիտուտ, համակարգ:

Հանրային իրավահարաբերության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար, մեր կարծիքով, այն պետք է ուսումնասիրության առարկա դարձնել ստատիկ վիճակում՝ որպես առանձին փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ, բովանդակություն) ամբողջություն, համակարգ:

Ճիշտ է, ցանկացած հարաբերությանը (այդ թվում՝ իրավահարաբերությանը) բնորոշ են վերոնշյալ տարրերը, սակայն այդ տարրերի բովանդակային-որակական տարբերությունն է, որ հնարավորություն է տալիս հարաբերությունները (այդ թվում՝ իրավահարաբերությունները) տարանջատել միմյանցից: Մասնավորապես, հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ, թե՛ օբյեկտով: Սակայն հարկ է նշել, որ հարաբերությունը «հանրային» հատկանիշով բնութագրելու և որպես «հանրային հարաբերություն» որակելու համար անհրաժեշտ են դրա առանձնահատկությունն ընդգծող երեք տարրերի (սուբյեկտ, օբյեկտ, բովանդակություն) միաժամանակյա առկայությունը: Այլ կերպ ասած՝ այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ, սակայն իրենց համակցության մեջ նոր միայն բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելը: Այժմ մեր առջև դրված խնդրի պատշաճ լուծման նպատակով և ուսումնասիրության առարկայի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար այդ տարրերը ներկայացնենք առանձին-առանձին:

ա) Հանրային իրավահարաբերության սուբյեկտային կազմը.

Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար անհրաժեշտ է, որ-

պեսզի հարաբերության կողմերից մեկը հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառողներ) կամ որոշակի իրավական հիմքերով հանրային գործառույթների իրացմանը ներգրավված մասնավոր անձը¹⁶ :

Իրավաբանական գրականության մեջ (հատկապես ընդհանուր իրավունքի երկրներում) ընդգծվում է այն իրողությունը, որ պետությունը շատ հաճախ հանրային հարաբերություններում հարային շահի սպասարկմանն ուղղված իր գործառույթներն իրականացնելիս անմիջականորեն հանդես չի գալիս, այլ կիսահիմքնություն գործակալությունների (agency) միջոցով, ինչպես նաև մասնավոր ընկերությունների միջոցով¹⁷ :

Արդարության առաջ չմեղանչելու համար պետք է նշենք, որ ՀՀ վարչական դատարանի մի շարք դատական ակտերի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ հանրային հարաբերության սուբյեկտային կազմի վերաբերյալ առկա է քիչ թե շատ ընդունելի մոտեցում: Մասնավորապես, այդ ակտերում ՀՀ վարչական դատարանը արձանագրել է, որ հանրային իրավահարաբերության պարագայում կողմերից մեկը պետք է լինի հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմինը: Սակայն, չգիտես ինչու, «հանրային իշխանության մարմին» եզրույթը ենթարկվում է սահմանափակ մեկնաբանման, և այդ եզրույթի տակ ի նկատի են ունենում միայն գործադիր իշխանության մարմինները՝ դրա ծավալներից դուրս թողնելով հանրային իշխանության մյուս օղակը կազմող տեղական ինքնակառավարման մարմիններին:

Մասնավորապես, ՀՀ վարչական դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԵԲԴ/0150/02/08 որոշմամբ ՀՀ վարչական դատարանի օրենսգրքի 3-րդ, 8-րդ, 13-րդ հոդվածներով ամրագրված դրույթների մեկնաբանության արդյունքում հանգել է հետևյալ եզրակացությանը. «...վարչական վեճում կողմերից մեկն անհրաժեշտաբար պետք է լինի **հանրային (գործադիր) իշխանության մարմինը**՝ վարչական մարմինը կամ դրա անունից հանդես գալու իրավունք ունեցող պաշտոնատար անձը»: Նույնաբովանդակ դիրքորոշում ՀՀ վարչական դատարանն հայտնել է նաև իր 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ

ՎԴ/4234/05/09 որոշմամբ:

Մեր հավաստմամբ՝ ՀՀ վարչական դատարանի կողմից «հանրային իշխանության մարմին» իրավական եզրույթի նման ընկալումը և նման կերպ կիրառումը պայմանավորված է հենց ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի ոչ ճիշտ մեկնաբանմամբ, մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ *յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել է...*:

Նորմի բառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները առանձնացված են պետական մարմիններից: Նման իրավակարգավորման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ օրենսդիրը նշված իրավադրույթն ամրագրելիս հաշվի է առել հանրային իշխանության երկու հարթությունների՝ պետական և տեղական, առկայությունը¹⁸ :

Ինչևէ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխարեն որոշակի իրավական հիմքերի առկայության պարագայում հանրային հարաբերություններում կարող են հանդես գալ նաև հանրային իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտները, որոնք, սակայն, իրավասու են իրականացնել որոշակի հանրային գործառույթներ հանրային իշխանական մարմինների (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ) անունից¹⁹ :

Նշված հանգամանքը, ըստ էության, պայմանավորված է պետության՝ որպես իրավական գոյի, երևույթի զարգացման ներկայիս աստիճանով: Սոցիալ-իրավական պետության գործունեության համար որպես հիմնարար արժեք է հանդիսանում մարդն իր արժանապատվությամբ, հիմնարար իրավունքներով և ազատություններով, (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված)²⁰ և մարդ-պետություն հարաբերության բովանդակությունում ներառված է պետության պարտականությունը՝ ձեռնարկելու անհրաժեշտ և իրավունքով թույլատրելի բոլոր միջոցները մարդ-անհատի համար անվտանգ, բարեկեցիկ և արժանավայել կյանք սպասելու հարցում:

Պետությունն իր հանրային գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու նկատառումով երբեմն այդ գործընթացում ներգրավում է հանրային իշխանական լիազորություններով չօժտված սուբեկտներ (պետական ոչ առևտրային կազմակերպություններ հիմնադրելու միջոցով, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ հիմնադրելով, առանց պետական բաժնեմասի՝ առևտրային կազմակերպությունների համապատասխան իրավական հիմքերով հանրային խնդիրների լուծմանը ներգրավելով):

Այդ սուբեկտների մասնակցությամբ հարաբերությունները նույնպես հանրային իրավական հարաբերություններ են, քանի որ այդ հարաբերություններում հանրային իշխանական սուբեկտները միջնորդավորված ձևով իրացնում են իրենց հանրային գործառույթները: Օրինակ՝ մի շարք հանրակրթական, բարձրագույն ուսումնական հաստատությունների («Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ, «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ) միջոցով պետությունն ապահովում է անձանց սահմանադրական իրավունք հանդիսացող կրթության իրավունքի իրացումը: Որոշակի բժշկական հաստատությունների (որոնք ունեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների կամ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կարգավիճակ) միջոցով ապահովում է անձանց՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրացումը:

Հայաստանյան իրականությունում առավել ուշագրավ են բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքում հասարակության և պետության կարիքերի համար սեփականության օտարման հետ կապված հարաբերությունների որակման հարցը: Մեր խորին համոզմամբ՝ այս հարաբերությունները նույնպես հանրային իրավահարաբերություններ են, որտեղ պետությունը, որպես կանոն, անմիջականորեն հանդես չի գալիս: Մասնավորապես, այդ հարաբերություններում պետությունը հանդես է գալիս այլ սուբեկտների (առևտրային կազմակերպությունների) միջոցով²¹: Ներկայումս ձևավորված դատաիրավակախրառական պրակտիկան փաստում է, որ այդ հարաբերություններից բխող վեճերը քննվում են ընդհանուր իրավասության դատարանների կողմից²², ինչը մեր կարծիքով, այդ հարա-

բերությունների՝ հանրային լինելը նույնպես սուբեկտիվ պատճառներով չընդունելու, ժխտելու արդյունք է:

Ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հանրային իրավահարաբերության սուբեկտային կազմի հետ կապված հարցի իրավական կարգավորումը կրում է հատվածական բնույթ:

Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված է, որ *սույն օրենսգրքը սահմանում է վարչական դատարանում և վճռաբեկ դատարանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը:*

Նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի համաձայն՝ *յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ...:*

Վերոգրյալ նորմերի բառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ վարչադատական պաշտպանությունից անձինք կարող են օգտվել միմիայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կամ դրանց պաշտոնատար անձանց հետ հարաբերություններից բխող վեճերով: Նման իրավակարգավորումը դուրս է թողել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայություն իրականացնող սուբեկտներին (պետական ծառայող, համայնքային ծառայող): ՀՀ-ում գործող օրենսդրությամբ պետական և համայնքային ծառայողները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձիք չեն: Մենք նման եզրահանգման ենք գալիս մի շարք նորմատիվ իրավական ակտերի համակարգային ուսումնասիրության արդյունքում (ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդ-

ված, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի²³ 1-ին հոդվածի 3-4-րդ մասեր, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքի²⁴ 1-ին հոդված, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի²⁵ 1-ին, 3-րդ հոդվածները):

Գործող վարչադատավարական պոզիտիվ իրավունքը անձանց թույլ չի տալիս նաև վարչադատավարական կարգով իրենց խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացնել նաև հանրային իրավահարաբերություններից բխող այն վեճերով, որի մյուս կողմը հանրային իշխանական լիազորությամբ օժտված մարմին չէ, սակայն որոշակի իրավական հիմքով ներգրավված է հանրային գործառույթների իրացման գործընթացում:

Նշված հարցի վերաբերյալ ամբողջական կարգավորումներ են ամրագրված, օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 6-ին ընդունված Ուկրաինայի Վարչական դատավարության թիվ 2747-IV օրենսգրքով, 2000 թվականի փետրվարի 10-ին ընդունված «Վարչական դատարանի մասին» Մոլդովայի Հանրապետության թիվ 793-XIV օրենքով:

«Վարչական դատարանի մասին» Մոլդովայի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է հանրային իշխանության մարմնի հասկացությունը, ըստ որի՝ հանրային իշխանության մարմին է համարվում օրենքով կամ այլ նորմատիվ վարչական ակտով հիմնադրված և հանրային շահերի իրացման կապակցությամբ որպես հանրային իշխանություն գործող ցանկացած կազմակերպված կառույց կամ մարմին: Սույն օրենքի իմաստով հանրային իշխանության մարմիններին հավասարեցվում են հանրային իշխանության գործառույթներ իրականացնող կամ հանրային սեփականություն (բարիքները) օգտագործող, օրենքով հանրօգուտ ծառայություններ մատուցելու լիազորություն ունեցող մասնավոր իրավունքի սուբյեկտները, այդ թվում՝ նոտարական ծառայություններ մատուցող անձինք:

Նույնաբովանդակ իրավակարգավորում է սահմանված նաև Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին, 7-րդ մասերով ամրագրված նորմերով:

Կան երկրներ, որտեղ վարչական դատավարության գործընթացը կարագվորող նորմատիվ իրավական ակտերում նույնպես վերոնշյալ հարցի վերաբերյալ կրագավորում չկա, սակայն այդ հարցերն իրենց կարգավորումն են ստացել ձևավոր-

ված դատական պրակտիկայով: Մասնավորապես, «Վարչադատական գործընթացի մասին» Գերմանիայի Դաշնության դաշնային օրենքով չկա որևէ կարգավորում այն հարցի կապակցությամբ՝ արդյո՞ք հանրային գործառույթներ իրականացնող մասնավոր իրավունքի սուբյեկտի մասնակցությամբ հարաբերությունները հանրային հարաբերություններ են, թե՛ ոչ: Սակայն մի շարք դատական ակտերով Գերմանիայի Դաշնության բարձրագույն վարչական դատարանն արձանագրել է, որ նման հարաբերություններն հանրային իրավահարաբերություններ են և դրանից բխող վեճերը ենթակա են վարչական դատարանների քննությանը²⁶:

Նման իրադրությունում գտնում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով, ինչպես նաև 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմերը պետք է խմբագրվեն (փոփոխվեն և/կամ/ լրացվեն) այնպես, որ անձանց հանապարհություն ընձեռվի իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության հայցեր ներկայացնել պետական և համայնքային ծառայողների, ինչպես հանրային գործառույթներ իրականացնող մասնավոր իրավունքի սուբյեկտների գործողության, անգործության և վերջիններիս ակտերի դեմ: Սակայն, ինչպես վերը նշեցինք, իրավահարաբերության հանրային լինելու համար միայն սուբյեկտային կազմը դեռևս բավարար չէ: Իրավահարաբերությունը հանրային որակելու և դրանից բխող վեճերը ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա լինելու համար միայն հարաբերության սուբյեկտային հատկանիշի անբավարար լինելն ամրագրված է նաև որոշ դատական ակտերով: Օրինակ՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ԵԲԴ/0150/02/08 որոշմամբ դատարանը արձանագրել է (4-րդ էջ, 2-րդ պարբերություն). «Վեճի ընդդատությունը վարչական դատարանին պայմանավորված է ոչ միայն վեճի սուբյեկտային հատկանիշով, այլ այդ վեճի հանրային իրավական բնույթով: Այսինքն, վեճն ընդդատյա է վարչական դատարանին, եթե այն բխել է հանրային իրավահարաբերությունից»: Նույնանման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վարչական դատարանն իր 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՎԴ/4234/05/09 որոշմամբ:

Մեր պնդմամբ, սակայն, դատարանների նշված մոտեցումը թերի է և ոչ ամբողջական: Մասնավորապես, իրավահարաբերության հանրային բնույթը և սուբյեկտային հատկանիշը հակադրվում են միմյանց և դիտարկվում են որպես հանրային իրավահարաբերությունը բնութագրող առանձին-առանձին հատկանիշներ: Մինչդեռ, մեր կարծիքով, իրավահարաբերության հանրային բնույթը ի հայտ է գալիս որոշակի հատկանիշների միաժամանակյա առկայությամբ, որոնցից մեկն էլ հենց սուբյեկտային կազմն է: Այլ կերպ ասած՝ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը: Սա նշանակում է, որ իրավահարաբերության հանրային բնույթը ի հայտ է գալիս վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Ինչևէ, պետությունը, ինչպես նաև տեղական իշխանությունները, իրենց գործառույթների իրացման համար անհրաժեշտ միջոցները, որպես կանոն, ձեռք են բերում քաղաքացիաիրավական գործարքների կնքման միջոցով, որտեղ պետությունը գործարքի մյուս կողմի հետ հանդես է գալիս որպես իրավահավասար սուբյեկտ: Այս ամենով պայմանավորված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների շարքին է դասել նաև պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին (հոդված 128)²⁷: Ավելին՝ դեյիկտային պարտավորությունների ժամանակ պետությունն է հատուցում պետական մարմինների և /կամ/ դրանց պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասը, որոնք նույնպես մասնավոր քաղաքացիաիրավական հարաբերություններ են (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-1065-րդ հոդվածներ)²⁸:

Նշված օրինակներն ուղղված են հիմնավորելու այն իրողությունը, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է:

Նման պարագայում անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրության առարկա դարձնել հանրային իրավահարաբերությունը մասնավոր իրավահարաբերություն-ից տարանջատող մյուս երկու տարրերը՝ բովանդակությունը և օբյեկտը:

բ) Հանրային իրավահարաբերության բովանդակությունը.

Իրավահարաբերության բովանդակություն ասելով՝ իրավագիտության մեջ նկատի ունեն հարաբերության սուբյեկտների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը²⁹:

Հանրային իրավահարաբերության պարագայում այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանական սուբյեկտը պարտավոր է իրականացնել օրենքով սահմանված իր իշխանական լիազորությունները (այսուհետ՝ նաև իշխանական լիազորություններ), որոնց իրացումն էլ անձանց (ֆիզիկական և իրավաբանական անձանց) հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանն է³⁰: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կրթության, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու անձանց իրավունքների իրացման համար պետությունը՝ ի դեմս լիազոր պետական մարմնի, պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ուսումնական և բժշկական հաստատությունների հիմնում, դրանց լիցենզավորում (ուսումնական հաստատությունների հավատարմագրում), այդ սուբյեկտների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանական մարմինը հանրային իրավահարաբերության բովանդակության մեջ ներառված իրավունք չունի, այլ ունի ընդամենը միայն ու միայն օրենքով սահմանված որոշակի դեպքերում հայեցողություն դրսևորելու հնարավորություն: Ներկայումս իրավագիտությունում արդարացիորեն ժխտվում է հանրային հարաբերություններում հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավունք ունենալու հանգամանքը, քանի որ իրավունքը թե՛ կրողի հարցում, թե՛ իրացման հարցում բնութագրվում է այնպիսի բնութեական հատկանիշներով, որ նման գործոնները հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին վերագրելը կհանգեցնի լուրջ խնդիրների³¹: Դրանով պայմանավորված՝ առավելագույնը, որ կարող է անել հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտն իր լիազորություններն իրականացնելիս, օրենքով վերջինիս իրավասությանը վերապահված հարցերի կարգավորման ընթացքում խնդրի օպտիմալ լուծման տարբերակի ընտրությունն է (վարչական հայեցողություն), այն էլ այն

պարագայում, եթե այդ ընտրության հնարավորությունը ընձեռված է օրենքով, նման ընտրության համար առկա են բավարար փաստական հիմքեր (հայեցողության փաստական սահմաններ)³² :

Վարչական հայեցողության խնդիրը իր վրա է սևեռել վարչագետների ուշադրությունը դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Անդրադառնալով հանրային իրավահարաբերության բովանդակության հարցին՝ Ա. Ի. Ելիստոնատովը նշել է, որ այդ հարաբերության սուբյեկտ հանդասցող իշխանական սուբյեկտը ունի ընդամենը վարչական հայեցողություն իրացնելու հնարավորություն, որի համար իրավական հիմք են հանդիսանում հանրային իրավական դիսպոզիտիվ նորմերը (jus dispositivum): Այլ կերպ ասած՝ դրանցով վարչական (հանրային իշխանական-ընդգծումն իմն է՝ Գ. Մուդնեցյան) մարմնին վերագրվում է հայեցողության որոշակի չափ (intra legem)³³ :

Սա նշանակում է, որ վարչական մարմինը հանրային իրավահարաբերությունների շրջանակում չի կարող կամայականորեն հրաժարվել անձին տրամադրել այս կամ այն իրավունքը, որևէ կերպ խոչընդոտել անձի իրավունքի իրացմանը և (կամ) վերջինիս ծանրաբեռնել որոշակի պարտականությամբ, եթե դրա համար բացակայում են օրենքով սահմանված հիմքերը (խոսքը վերաբերում է իրավական նորմերին և այդ նորմերի հիպոթեզներում սահմանված փաստական հանգամանքներին, որոնց առկայության պարագայում նոր միայն այդ նորմերի կիրառումը կկրի իրավաչափ բնույթ):

Հանրային իրավահարաբերության իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտը /կողմը/ նույնպես կրում է այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականություններ³⁴ : Այլ կերպ ասած՝ այդ հարաբերություններում պարտականություն կրող միակ սուբյեկտը իշխանական-լիազոր մարմինը չէ: Օրինակ՝ հարկային իրավահարաբերություններում տնտեսվարող սուբյեկտները, բացի իրավունքներից, ունեն նաև որոշակի պարտականություններ («Հարկերի մասին» ՀՀ օրենքի³⁵ 15-րդ հոդված), որոնց չիրականացման դեպքում վերջիններս կարող են ենթարկվել պատասխանատվության:

Ավելին՝ շատ դեպքերում հանրային սուբյեկտիվ իրավունքներ կրողները իրենց այդ իրավունքներն իրացնելիս պետք է հետևեն նորմատիվ

իրավական ակտերով սահմանված պրոցեսուալ իրավական կարգավորումներին: Օրինակ, որպեսզի անձը կարողանա ապրանքները ՀՀ տարածք ներմուծել ՀՀ մաքսային օրենսգրքի³⁶ 87-րդ հոդվածով սահմանված մեթոդով (գործարքի գնի մեթոդ)՝ ապրանքի մաքսային արժեքը հաշվարկելու միջոցով, նա պետք է մաքսային մարմիններին ներկայացնի բավարար ապացույցներ (հաշիվ-ապրանքագիր կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ), որոնցով կհավաստվի ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի կիրառման համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքների առկայությունը:

գ) Հանրային իրավահարաբերության օբյեկտը.

Իրավագիտության մեջ գրեթե բոլորի կողմից ընդունելի է, որ իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը³⁷ :

Մեր համոզմամբ՝ հանրային իշխանության իրականացման (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, անմիջական ժողովրդավարական ինստիտուտների կիրարկման) ընթացքում պետք է գերակայող լինի և հետապնդվի մեկ նպատակ, այն է՝ ժողովրդին պատկանող իշխանության իրականացման ընթացքում իրավասու մարմինների կողմից պետք է բացահայտվի և հանրային շահը ընկալվի ավելի բարձր մակարդակում (խոսքը հանրային իշխանության բոլոր մակարդակներում հանրային շահի ընկալման, ըմբռնման մասին է) և միջոցներ ձեռնարկվի դրա իրագործման, կյանքի կոչման, հասարակական կյանքում առարկայացման համար: Այդ ամենը իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներն իրականացնում են գոյություն ունեցող դեռևս միակ թույլատրելի ձևի՝ հանրային իրավահարաբերության միջոցով: Այլ կերպ ասած՝ հանրային շահը (դրա կոնկրետ դրսևորումները) իդեալականից, գաղափարականից դեպի իրականը և առարկայականը տանող միակ ուղին հանրային իրավահարաբերությունն է:

Իրերի նման դասավորության պայմաններում մենք գտնում ենք, որ հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի

կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ³⁸ : Նշված իրողությունն անուղղակի իրավական կարգավորման է ենթարկված «Վարչական դատարանի մասին» Մոլդովայի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմով:

Տեղին ենք համարում վկայակոչել Յու. Ա. Տիխամիրովի հետևյալ խոսքերը. «Հանրային իրավունքում (դրանով կարգավորվող հարաբերության շրջանակներում ընդծումն ինն է՝ **Գ. Մուղնեցյան**) սուբյեկտը գործում է ոչ թե իր շահերի, այլ հանրային շահերի վերահսման և ապահովման համար»³⁹ :

Նման պարագայում արդարացիորեն կարող է հարց ծագել, թե ի՞նչ է իրենից ներկայացնում հանրային շահը, որոնք են այն էական հատկանիշները, որոնց համակցությամբ հնարավոր է պարզել այդ երևույթի էությունը և այն տարբերել այլ երևույթներից: Հարկ է նշել, որ հանրային շահ հասկացությունը որոշ երկրներում փորձ է արվել սահմանել հենց պոզիտիվ իրավունքով: Մասնավորապես, «Վարչական դատարանի մասին» Մոլդովայի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված նորմի համաձայն՝ հանրային շահը հանրային հաստատությունների և այլ սուբյեկտների կազմակերպումը և գործունեությունը կարգավորող նորմերով պաշտպանվող շահերն են: «Շահ» եզրույթով անվանվող երևույթը հանդիսանում է մի շարք գիտությունների, այդ թվում՝ իրավագիտության ուսումնասիրության առարկա: Դրա հետազոտման արդյունքում ձևավորվել են մի շարք տեսություններ: Իրավագիտության մեջ շահը ներկայացվում է որպես դիալեկտիկական երևույթ, որի էությունը ի հայտ է գալիս սուբյեկտիվի և օբյեկտիվի համադրման արդյունքում: Մասնավորապես, շահի առարկան կազմող պահանջմունքը, կարիքը ներկայացվում է որպես դրա օբյեկտիվ սկիզբ, իսկ այդ պահանջմունքի գիտակցումը և դրա հիմքի վրա նպատակների ձևավորումը վերագրվում է սուբյեկտիվ սկզբին⁴⁰ : Իրավագիտության մեջ իրավական շահը առանձնացվում է այլ շահերից և ներկայացվում է որպես տիպականացված շահ, ավելին՝ իրավունքում շահի դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս դիալեկտիկական փոխկապակցվածության մեջ, որոնք գրեթե միշտ փոխլրացնում են միմյանց⁴¹ :

Ինչևէ, իրավական շահի դասակարգումը հանրայինի և ոչ հանրայինի իրականացվում է՝ հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին: Այլ կերպ ասած՝ շահը համարվում է հանրային (հանրային շահ), քանի որ դրա կրողը հանդիսանում է հասարակությունը՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ⁴² : Իրավաբանական գրականության մեջ առկա է տեսակետ, համաձայն որի՝ հանրային շահը, կրող սուբյեկտի հետ կապված, կարող է դրսևորվել միայն համայնքային և (կամ) պետական շահի տեսքով, այլ կերպ՝ հանրային շահը չունի իրավաբանական դրսևորում⁴³ :

Սակայն հանրային շահը, միայն սուբյեկտային չափանիշով չէ, որ տարբերակվում է այլ, այդ թվում՝ մասնավոր իրավական շահից: Հանրային շահի տարբերակման հիմք է հանդիսանում նաև դրա առարկան, մասնավորապես, հանրային շահի առարկա են հանդիսանում համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներ, որոնց հասարակական կյանքում առարկայացումը անհրաժեշտ նախապայման է հասարակության, մարդկության գոյատևման և հետագա զարգացման համար⁴⁴ :

Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ հանրային շահը, իր բովանդակությունը կազմող հանրային բարիքներով, մեկընդմիջ տրված և կաղապարված երևույթ չէ, այն ժամանակի և տարածության մեջ ենթարկվում է փոխակերպումների (տրանսֆորմացիաների)՝ կապված հասարակության պահանջմունքների փոփոխման հետ: Ավելին՝ հանրային շահին բնորոշ է նաև տեղայնացման հատկությունը, ինչը նշանակում է, որ, որոշակի գործոններով պայմանավորված, շահը հանրային է զուտ կոնկրետ երկրի տարածքում: Ամեն դեպքում, ներկայումս դատական համակարգի (թե՛ միջազգային, թե՛ ներպետական) զարգացումը վկայում է այն մասին, որ հանրային իրավական շահի՝ որպես գանահատողական եզրույթի, իրական իմաստը վերահանող և մասնավոր շահի հետ փոխհարաբերակցության օպտիմալ տարբերակը ի հայտ բերող հիմնական սուբյեկտներից մեկն էլ հենց դատական ատյաններն են⁴⁵ : Պետության (ամբողջ պետական մեխանիզմի) առաքելությունն էլ կայանում է նրանում, որ վեր հանի հանրային շահը և մասնավոր շահի հետ հավասարակշռելով, փոխհամաձայնեցնելով՝ դրանք ուղղորդելով թե՛ իրավաստեղծ, թե՛ իրավակիրառ, թե՛ իրավա-

պաշտպան գործընթացներին:

Վերոգրյալի ընդհանրացման արդյունքում հանրային իրավահարաբերությունը կարելի բնութագրել որպես **հարաբերություն, որում կողմերից մեկն անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (կամ որոշակի իրավական հիմքով հանրային գործառույթների իրացման գործընթացում ներգրավված իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտը), որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները:**

Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ենթակա լինելու հանգամանքը մեր կողմից առաջադրված եղանակով պարզելու դեպքում ՀՀ դատական ատյանները (դրանց անունից հանդես եկող պաշտոնատար անձիք՝ դատավորները), ինչպես նաև իրավակիրառական գործունեության մյուս սուբյեկտները պետք է գնահատման առարկա դարձնեն հետևյալ հանգամանքները.

- արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված (պետական կան տեղական ինքնակառավարման մարմին, դրանց պաշտոնատար անձիք, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներ) կամ նման լիազորությամբ չօժտված, սակայն հանրային գործառույթների իրացմանը որոշակի իրավական հիմքերով ներազդաված մասնավոր իրավույթի սուբյեկտ է, թե՛ ոչ,

- արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունն է կազմում հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

- արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալիրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

Այս պայմանների միաժամանակյա առկայության պարագայում նոր միայն հնարավոր կլինի փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի հաղթահարելու այդ հարաբերությունից բխող վեճերի ենթակայության հարցի վերա-

բերյալ հակասական, իրարամերժ մոտեցումները՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Ամեն դեպքում ենթակայության հետ կապված հարցերի պարզման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բոլոր հանրային հարաբերություններից բխող վեճերը չեն, որ վերապահված են ՀՀ վարչական դատարանի քննությանը:

2. Հանրային իրավահարաբերությունից բխող վեճի մասով.

Ինչպես արդեն վերը նշվեց՝ հանրային իրավահարաբերություններում հանրային իշխանական լիազորություն ունեցող սուբյեկտը հանրային շահի կյանքի կոչման և առարկայացման նպատակով իրացնում է իր իշխանական լիազորությունները, սակայն միշտ չէ, որ հանրային շահի իրացման կապակցությամբ ծագած հարաբերություններում հանրային իշխանությունն իրացնող սուբյեկտները դրսևորում են իրավաչափ վարքագիծ, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Քիչ չեն դեպքերը, երբ ոչ իրավաչափ (հակաիրավական) վարքագիծ են դրսևորում նաև այդ հարաբերությունների՝ իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտները: Նշված հանգամանքները հարաբերության մասնակիցների միջև հանգեցնում են տարաձայնությունների, «բախումների», վեճերի:

Իրավաբանական գրականության մեջ վեճը սահմանվում է որպես որոշակի իրավական հարցի կապակցությամբ իրավունքի երկու և (կամ) ավելի սուբյեկտների շահերի բախում՝ պայմանավորված վիճելի հարցի կապակցությամբ վերջիններիս հակադիր և միմյանց փոխբացառող շարժառիթներով և նպատակներով⁴⁶:

Հանրային իրավահարաբերությունից բխող վեճի առարկայի վերաբերյալ մեզ համար անընդունելի մոտեցում կա դատական պրակտիկայում, մասնավորապես, ՀՀ վարչական դատարանն իր 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՎԳ/4234/05/09 որոշմամբ վեճի առարկայի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը (2-րդ էջ, 5-րդ պարբերություն). «Հանրային իրավահարաբերություններից ծագող վարչական վեճի առարկան այն հանրային սուբյեկտի իրավունքները կամ պարտականություններն են, որոնց վերաբերող (որպես կանոն) վարչական ակտի կամ գործողության (անգործության) առնչությամբ տարաձայնություն-

ներ են առաջացել վարչական մարմնի և մասնավոր անձի միջև, կամ առաջացել այդ ակտի իրավաչափության հարց: Այսինքն՝ մասնավոր անձը համաձայն չէ վարչական մարմնի կողմից իր հանդեպ՝ օրենքի կամ նորմատիվ իրավական այլ ակտի որևէ դրույթի՝ վարչական ակտով կիրառման հետ, գտնելով, որ դրանով իր իրավունքները խախտվել են կամ իր վրա դրվել է ոչ իրավաչափ պարտականություն»։ Նույնանման դիրքորոշում է հայտնել նաև Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր 2009 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ԵԲԴ/0150/02/08 որոշմամբ (4-րդ էջ, 3-րդ պարբերություն):

Ըստ մեզ՝ հանրային իրավահարաբերությունից բխող վեճի առարկան կազմում է ոչ թե անձի իրավունքը և (կամ) պարտականությունը, ինչպես նշված է ՀՀ վարչական դատարանի վերը հիշատակված որոշումներում, այլ՝ վարչական մարմնի ոչ իրավաչափ արարքը, վերջինիս ակտի հակաօրինականությունը, կամ իշխանական լիազորություններով չօժտված սուբյեկտի հակաիրավական վարքագիծը⁴⁷ :

Դատարանի իրավասությանը ենթակա վեճերի առարկայի վերաբերյալ նույնաբովանդակ դիրքորոշում է հայտնել նաև Ֆ. Ն. Հայեքը, նշելով, որ դատարանների կողմից իրավական գնահա-

տանքի են ենթակա անձանց միայն այն արարքները, որոնք վնասում են այլ անձանց, այլ կերպ ասած արարքներ, այլ անձանց նկատմամբ (operationes quae sunt ad alterum)⁴⁸ :

Եթե հանրային շահի իրացման կապակցությամբ ծագած հանրային իրավահարաբերություններում իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը կատարում է արարք (անգործություն, գործողություն), որի համար լիազորված չէ օրենքով, ապա իրավահարաբերության մյուս կողմը սահմանադրաիրավական մակարդակով ամրագրված հնարավորություն ունի համապատասխան արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների գործադրմամբ (ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված) պահանջելու վերացնել հակաիրավական արարքով պայմանավորված խախտումները, ինչպես նաև իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին իրավաչափ վարքագիծ դրսևորելու կապակցությամբ պահանջ ներկայացնել: Անձինք վերոնշյալ հնարավորությունը կարող են իրացնել թե՛ արտադատական պաշտպանության, թե՛ դատական պաշտպանության միջոցներով: Անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքի դատական արդյունավետ պաշտպանության իրացման ապահովմանն էլ հենց ուղղված է վարչադատավարական գործընթացը՝ իր ընթացակարգային կարգավորմամբ:

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2007/20 (544), 18.04.2007, հոդ. 489:

² Տե՛ս ՀՀՊՏ 2007/20 (544), 18.04.2007, հոդ. 490:

³ Տե՛ս ՀՀՊՏ 2007/64 (588), 19.12.2007, հոդ. 1300:

⁴ Մինչև 2008 թվականի հունվարի 1-ը հանրային իրավահարաբերություններից բխող վեճերը, որոշակի վերապահումներով, քննվում էին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով. մասնավորապես, նշված օրենսգրքի 25-26-րդ գլուխներով սահմանված դատավարական ինստիտուտներն (25-րդ գլխով ամրագրված դրույթներով կարգավորման էին ենթարկված վարչական իրավախախտումների համար տույժի ենթարկելու մասին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց որոշումները վիճարկելու վերաբերյալ գործերի, իսկ 26-րդ գլխով սահմանված նորմերով՝ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի հատուկ հայցային վարույթները) ամբողջությամբ վերաբերում էին հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի քննությանը:

⁵ Տե՛ս, օրինակ, Մեղրյան Ս. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի ենթակայությունը վարչական դատարանին // Գլխաժողովի զեկուցումների ժողովածու: Ընդհանուր խմբագրությամբ Գ.Ս. Ղազինյանի: Եր.: ԵՊՀ հրատ., 2008, էջ 65-72, Ղազարյան Ն. Վարչական արդարադատության դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում // Պետություն և իրավունք N 4 (42), էջ 82-89, files/news/1131_am.pdf կայքից 31.07.2010թ., Աբգարյան Է. Նոտարական գործողությունների վիճարկման վերաբերյալ գործերի վարույթը վարչական դատավարությունում վերցված է համացանցի

http://www.court.am/files/news/1128_am.pdf կայքից 31.07.2010թ., N 4, 2007թ., էջ 11-14, Տեր-Թովմասյան Բ. Վարչական արդարադատության ինստիտուտի տեղը և դերը վարչական իրավունքում // Իրավագիտության արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու: Եր.: Երևանի համալս հրատ., 2007թ., էջ 68-80, Ханданян Р. Некоторые аспекты административной юстиции // Իրավագիտության արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու: Եր.: Երևանի համալս հրատ., 2007թ., էջ 81-86:

⁶Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2009 հոկտեմբերի 13-ի թվականի թիվ ՎԳ/4234/05/09 որոշումը, որն անփոփոխ է թողնվել ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՎԳ/4234/05/09 որոշմամբ: Նշված որոշման դեմ տարված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՎԳ/4234/05/09 որոշմամբ վերադարձրել է:

⁷Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունվարի 11-ի թիվ ԵԿԳ/3492/02/09 որոշմամբ վերադարձվել է այն նույն հացադիմումը (նույն փաստական և իրավական հիմքերով, ինչպես նաև նույն առարկայով, որի ընդունումը մերժվել էր ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի թիվ ՎԳ/4234/05/09 որոշմամբ: 2010 թվականի հունվարի 11-ի թիվ ԵԿԳ/3492/02/09 որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2010 թվականի փետրվարի 8-ի թիվ ԵԿԳ/3492/02/09 որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկվող որոշումը թողնվել է անփոփոխ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նշված որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 7-ի թիվ ԵԿԳ/3492/02/09 որոշմամբ վերադարձվել է:

⁸Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԵԶԳ/0150/02/08 որոշումը:

⁹Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 12-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը: Հարկ ենք համարում նշել, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը բացի այն, որ ոչ իրավաչափորեն չի քննել մասնավոր հարաբերությունից բխող վեճը, կայացրել է սխալ դատական ակտ (հայցադիմումը վերադարձնելու մասին)՝ կիրառելով համապատասխանաբար ՀՀ քաղաքացիական դատավարության 92-րդ հոդվածով ամրագրված համապատասխան դրույթը: Վեճն ընդհանուր իրավասության դատարանի քննությանն ենթակա չլինելը հիմք է հայցադիմումի ընդունումը մերժելու համար (ՀՀ քաղաքացիական դատավարության 91-րդ հոդվածի 1-ին մաս): Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ԵԱԶԳ/1742/02/09 որոշումը:

¹⁰Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի ապրիլի 28-ի բողոքը բավարարելու մասին թիվ ՎԳ/4/0074/05/09 որոշումը, 2009 թվականի մարտի 23-ի թիվ ՎԳ/6279/05/08 վճիռը: ՀՀ վարչական դատարանը 2009 թվականի մայիսի 11-ին ընդունել է բողոքը մերժելու մասին թիվ ՎԳ/1696/05/09 որոշումը, որն ամբողջովին հակասում է վերը նշված դատական ակտերին: Նշենք, որ երկու դեպքերում էլ հայցվորի պահանջի էությունն նույն է եղել և վերջինս այն հիմնավորել է նույնանման փաստական և իրավական հիմքերով:

¹¹Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ ՎԳ/0752/05/08 վճիռը, 2009 թվականի ապրիլի 10-ի ՎԳ-646105/08 վճիռը, 2009 թվականի հունիսի 9-ի ՎԳ/1468/05/09 վճիռը, 2009 թվականի հուլիսի 14-ի թիվ ՎԳ/1623/05/09 վճիռը, 2009 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՎԳ/1416/05/09 վճիռը: Նույնաբովանդակ դիքորոշում կա նաև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավակիրառական պրակտիկայում, օրինակ տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հուլիսի 24-ի թիվ ՎԳ/3881/05/08 որոշումը: Հարկ ենք համարում նշել, որ նշված դատական ակտերով լուծում ստացած վեճի առարկայով, նույնանման կողմերով և նմանատիպ հիմքերով գործեր իրավամբ քննվում են ընդհանուր իրավասության դատարանների կողմից (տես օրինակ՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի մայիսի 29-ի վճիռը) Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ ԳԳ/0089/02/10 վճիռը, Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԱՆԳ/2106/02/09 վճիռը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2010 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԱՆԳ/2106/02/09 որոշումը:

¹²Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի հունիսի 3-ի թիվ ԵԿԳ/3114/02/09 վճիռը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 25-ի թիվ ԵԿԳ-0273/02/08 վճիռը, դրա բողոքարկման արդյունքում կայացված ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2010 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԳ-0273/02/08 որոշումը: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի թիվ ԵԿԳ-0291/02/08 վճիռը: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԵԿԳ-2003/02/08 վճիռը: Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 29-ի թիվ ԵԱՆԳ-1824/02/08 վճիռը: ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի օգոստոսի 11-ի ԵԿԳ/2003/02/08 որոշումը:

¹³ Նշված հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը բավականին հստակ հայտնել է ՀՀ սահմանադրական դատարանը 2009 թվականի փետրվարի 3-ի ՍԳ-Ո 787 որոշմամբ: Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»: Սա նշանակում է, որ դատարանները պարտավոր են առաջնորդվել ՀՀ իրավական համակարգի մասը կազմող 2009 թվականի փետրվարի 3-ի ՍԳ-Ո 787 որոշմամբ, սակայն այդ որոշումից հետո էլ դատարանները, կարծես թե, չեն փոխել իրենց դիրքորոշումը նշված հարցի կապակցությամբ: Տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ ՎԳ-0476/05/08 վճիռը: ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՎԳ-0476/05/08 վճիռը: Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հուլիսի 15-ի թիվ ԵԷԴ /0368/02/09 վճիռը:

¹⁴ Մեր կարծիքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթով «գործ» և «վեճ» եզրույթներն անհարկի նույնացվել են: Իրականում հանրային հարաբերության կողմերի միջև ծագում է վեճ և իրավական պետության կառուցակարգում դատարանն է այն ինստիտուտը, որն արդարադատություն է իրականացնում կողմերի միջև առկա վեճը քննելու և լուծելու միջոցով: Տե՛ս, օրինակ, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի-Եր: «Իրավունք» 2010թ., էջ 897, Барак А., Судейское усмотрение. Перевод с английского.-М.: Изд-во НОРМА,1999. С. 231: Հարցի վերաբերյալ ճիշտ իրավակարգավորում է ամրագրված 21.01.1960թ. ընդունված «Վարչադատական գործընթացի մասին» Գերմանիայի Դաշնային օրենքով, որի §40-ի 1-ին մասով սահմանված է, որ **բոլոր հանրային-իրավական վեճերը**, որոնք չեն վերաբերվում սահմանադրական իրավունքի ոլորտին, քննվում են վարչական իրավասության դատարանների կողմից, եթե դաշնային օրենքով այդ վեճերի լուծումն ուղղակիորեն վերապահված չէ այլ դատարանի իրավասությանը: Նույնաբովանդակ իրավական կարգավորում է առկա նաև Ռուսիանայի վարչական դատավարության օրենսգրքում, որի 4-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված նորմի համաձայն՝ վարչական դատարանների իրավասությանը վերաբերելի են **բոլոր հանրային-իրավական վեճերը**, բացառությամբ այն վեճերի, որոնց լուծումն օրենքով վերապահված է այլ դատարանների իրավասությանը: Ինչ վերաբերվում է «գործ» եզրույթին, ապա այն դատավարական հարաբերություններում, այդ թվում՝ վարչադատավարական հարաբերություններում, կրում է գործավարական բնույթ: Դատական գործ ասելով՝ պետք է հասկանալ դատարանի կողմից քննվող կոնկրետ վեճի կապակցությամբ նյութերի ամբողջություն, որն իր մեջ ներառում է դատավարության մասնակցիների ներկայացրած նյութերը, գործով ապացույցները, դատավարական փաստաթղթերը, դատական ակտերը և այլն: Դրանով էլ հենց պայմանավորված է այն իրողությունը, որ ՀՀ Դատարանների մախագահների խորհուրդը (ՀՀ ԴՆ) ընդունել է իրավական ակտեր, որոնցով սահմանվում են գործերի կազմման, վարման, համարակալման և այլ գործավարական կանոններ, մասնավորապես, ԴՆ -ի 2007թ. դեկտեմբերի 21-ի թիվ 23-Լ որոշմամբ կարգավորվում են դատական գործերի վիճակագրական դասակարգիչների, դատական գործերի կազմման և համարակալման հետ կապված գործավարական հարաբերությունները (այս որոշման մասին ավելի մանրամասն տես Հայաստանի Հանրապետության դատական դպրոց, դատական ծառայողի սեղանի գիրք, Իրավունք, 2008 էջ 18-34): Ավելին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի որոշ դրույթներով «վեճ» և «գործ» եզրույթներն օգտագործվում են իրենց իրական իմաստով, օրինակ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-3-րդ մասերով, 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-3 կետերով, 23-րդ հոդվածի 1-ին մասով, 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված նորմերով «վեճ» եզրույթն օգտագործվում է իր իրական իմաստով: Մեր կարծիքով «գործ» և «վեճ» հասկացությունների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ոչ ճիշտ կիրառելը պայմանավորված է օրենսդրական (իրավաբանական) տեխնիկայի կանոնների չպահպանմամբ: Մասնավորապես. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-4-րդ մասերով սահմանված է, որ իրավական ակտի դրույթները պետք է ընկալվեն միանշանակ, ապահովեն հուզական չեզոքություն: **Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:**

¹⁵ Տե՛ս, օրինակ Лекции по общей теории права. Коркунова Н.М. Книга 2. Объективная и субъективная сторона права. По изданию 1914 года. Редактирование и комментарии. (с) www.allpravo.ru – 2003. С. 141; Толстой Ю. К. К теории правоотношения. Ленинград, Изд-во Ленинградского Ун-та. 1959. С. 3; Протасов В.Н. Теория права и государства. Проблемы теории права и государства: Вопросы и ответы. М.: Новый Юрист, 1999. С 40-41; Теория государства и права. Под ред. Алексеева С.С. М., 1998. С. 287; Петражицкий Л. И. Теория права и государства в связи с теорией нравственности. Серия „Мир культуры, истории и философии”. СПб.: Изд-во „Лань”. Санкт-Петербург, 2000. С.

278.

¹⁶ Հանրային հարաբերություններ են նաև հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների միջև առկա հարաբերությունները: Նշված սուբյեկտների միջև առկա հարաբերությունները հանրային են, քանի որ այդ հարաբերությունների ընթացքում վերջիններս իրացնում են բացառապես իրենց իշխանական լիազորությունները, որոնք ուղղված են օրենքով իրենց իրավասությանը վերապահված կառավարման ենթակա սոցիալական ոլորտում հանրային շահի իրացմանը: Դրանով պայմանավորված՝ սույն աշխատանքի տեքստում հանրային իրավահարաբերությունն ուսումնասիրության առարկա է դարձվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ չէ:

¹⁷ Սրա վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Берман У. Правовая система США. 3-й выпуск. Новая юстиция. 2007. С. 339-363; Bernard Schvarz, Roberto L. Corada, Administartive law: a casebook, fifth edition, New York 2001, էջ 6-49.

¹⁸ Տեղական (մունիցիպալ) իշխանությունն իրականացվում է տեղական ինքնակառավարման իրականացման միջոցով, իսկ պետական իշխանությունն իրացվում է պետական կառավարման, օրինաստեղծման, արդարադատության իրականացման միջոցով: Նշված իրողությունն անուղղակի և ուղղակի իրավական կարգավորման է ենթարկված մի շարք նորմատիվ իրավական ակտերով, մասնավորապես «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների մասը չեն:

¹⁹ Նշված հանգամանքը տեղ է գտել նաև ՌԴ սահմանադրական դատարանի որոշ ակտերում. Տե՛ս, օրինակ, ՌԴ սահմանադրական դատարանի 2002 թվականի փետրվարի 19-ի թիվ 5 որոշումը, 1998 թվականի մայիսի 19-ի թիվ որոշումը: Հղումն ըստ համացանցի <http://www.ksrf.ru/Decision/Pages/default.aspx> կայքի 01.08.2010թ. դրությամբ:

²⁰ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված դրույթում ներդրված սահմանադրաիրավական իմաստի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի Եր: «Իրավունք» 2010թ., էջ 63-70: Հարկ ենք համարում նշել նաև, որ մարդը՝ որպես գերագույն արժեքի և նրա հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրողության՝ սահմանադրաիրավական մակարդակով ամրագրմանը նախորդել են հսկայական սոցիալ-իրավական գործընթացներ. անհատ-պետություն հարաբերություններն անընդհատ կրել են բովանդակային-որակական փոփոխություններ, ինչը ժամանակի և տարածության մեջ ունեցել է իր գիտատեսական հիմքերը և հիմնավորումները: Այդ գիտատեսական հայեցակարգերի մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Казинян А. Г. Европейская судебная защита основных прав и свобод человека. Люксембург-Страсбург. Сравнительно-правовой анализ. Ер., 2005. С. 13-17.

²¹ Օրինակ, ՀՀ կառավարության 01.03.2007թ. թիվ 347-Ն որոշմամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հետ կապված հարաբերություններում որպես ձեռքբերող կողմ հանդես են գալիս տարբեր կազմակերպաիրավական ձևեր ունեցող առևտրային կազմակերպություններ:

²² Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԵԿԴ-2003/02/08 վճիռը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի թիվ ԵԿԴ-0291/02/08 վճիռը:

²³ Տե՛ս ՀՀՊՏ 2002/1 (176), 09.01.02, հոդ. 1:

²⁴ Տե՛ս ՀՀՊՏ 2007/66 (590), 26.12.07 հոդ. 1339:

²⁵ Տե՛ս ՀՀՊՏ 2005/7 (379), 26.01.05 հոդ. 117:

²⁶ Ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Рихтер И., Шуперт Г.Ф. Судебная практика по административному праву, 1995, перевод с немецкого. М., 2000. С. 150-158.

²⁷ Տե՛ս ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.98: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածով ամրագրված դրույթներով կարգավորվող հարաբերությունների և պետության՝ որպես այդ հարաբերության մասնակցի, վերաբերյալ որոշակի դիրքորոշում է առկա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԵԶԴ-0527/02/08, ինչպես նաև նույն օրվա թիվ ԵԶԴ-0484/02/08 որոշումներում:

²⁸ Սրա հետ կապված տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ՎԴ-3172/05/08 որոշումը, որով թիվ ՎԴ-3172/05/08 քաղաքացիական գործն ուղարկվել է ըստ ընդդատության:

²⁹ Տե՛ս Толстой Ю. К. К теории правоотношения. Ленинград: Изд-во Ленинградского Ун-та. 1959. С. 32; Халфина Р.О. Общее учение о правоотношении. М.: Юр.лит. 1974. С. 202-203; Прогасов В.Н. Теория права и государства. Проблемы теории права и государства: Вопросы и ответы. М.: Новый Юрист, 1999. С. 41.

³⁰ «Պետության պարտականություն» հասկացության, դրա տեսակների, դրա իրականացման՝ որպես անձանց իրավունքների իրացման կարևորագույն երաշխիքի մասին ավելի մանրամասն տե՛ս Каримова Р.Р. Юридические обязанности, сущность и проблемы реализации: диссертация на соискание ученой степени кандидата юридических наук

наук, Екатеринбург, 2008. С. 105-122.

³¹Տե՛ս, օրինակ, Мальцев Г.В. О субъективных публичных правах // Материалы научной конференции „Интерес в публичном и частном праве”: Государственный университет-Высшая школа экономики. М., 2002. С 15.

³²Սակայն հանրային իրավունքում անվիճելի է այն փաստը, որ օրենքով սահմանված դեպքերում հանրային իրավահարաբերություններում իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներն ունենում են որոշակի ազատություն՝ իրենց իրավասությանը վերապահված հարցի լուծման տարբերակների ընտրության հարցում, որը, սակայն, չի կարող կրել կամայական բնույթ: Նման ընտրության հնարավորությունը իրավագիտությունում ստացել է վարչական հայեցողություն անվանումը (administrative discretion), որը մի շարք աշխատությունների ուսումնասիրության առարկա է դարձվել: Տե՛ս, օրինակ, Мицкевич Л.А. Проблема административного усмотрения и неопределенных правовых понятий в административном праве Германии // Сравнительное правоведение: наука, методология, учебная дисциплина. Материалы международной научно-практической конференции. Красноярск, 2008. С. 196-202; Берман У. Правовая система США. 3-й выпуск. Новая юстиция, 2007. С. 361. Մեր խորին համոզմամբ նշված հանգամանքը հաշվի առնելու արդյունք է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով վարչական հայեցողության հարցի հետ կապված իրավական կարգավորման սահմանումը, մասնավորապես նշված նորմով ամրագրված է, որ հայեցողական լիազորություններն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

³³Տե՛ս Եлистратов А.И. Основная начала административного права. Издание Г.А. Лемана. М. 1914. С. 86.

³⁴ՌԳ սահմանադրական դատարանը հարկեր վճարելու պարտականությունն իր 1998 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 24 որոշմամբ ներկայացրել է որպես հանրային իրավական պարտականություն: Հղումն ըստ համացանցի <http://www.ksrf.ru/Decision/Pages/default.aspx> կայքի 01.08.2010թ. դրությամբ:

³⁵Տե՛ս ՀՀՊՏ 1997/11, 20.05.97:

³⁶Տե՛ս ՀՀՊՏ 2000/19 (117), 21.08.00:

³⁷Իրավահարաբերության օբյեկտի, դրա տեսակների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս օրինակ Толстой Ю. К. К теории правоотношения. Ленинград: Изд-во Ленинградского Ун-та. 1959. С. 48-49; Халфина Р.О. Общее учение о правоотношении. М.: Юр. лит. 1974. С. 202-203; Дудина А. П. Объект правоотношения (вопросы теории). Изд-во Саратовского университета. 1980. С. 32-70.

³⁸Ներկայումս հանրային իրավունքում (մասնավորապես վարչական իրավունքում) գերիշխող է այն մոտեցումը, մարդ-պետություն հանրային հարաբերությունները ծագում են պետության կողմից մասնավոր իրավունքի սուբյեկտներին հանրային ծառայություններ մատուցելու կապակցությամբ, որոնց դիմաց վերջիններս վճարում են հարկերով: Պետության կողմից մատուցվող այդ ծառայությունների առարկան է մարդկանց համար անվտանգ և բարեկեցիկ կյանք ապահովումը: Տե՛ս օրինակ Административное-процессуальное право Германии: закон об административном производстве, закон об административно-судебном процессе, законодательство об исполнении административных решений, М. Волтерс. N 5. С. 14-16; Административная реформа: проблемы развития и совершенствования (IX Лазаревские чтения) // Государство и право, 2006. N 8. С. 10.

³⁹Տե՛ս Тихомиров Ю.А. Интерес в публичном и частном праве: согласование и противоборство // Материалы научной конференции „Интерес в публичном и частном праве”: Государственный университет-Высшая школа экономики. М., 2002. С. 5.

⁴⁰Ռ-րա վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Тотьев К. Ю. Публичный интерес в правовой доктрине и законодательстве // Государство и право, 2002, N 9. С. 19-20; Михайлов С.В. Интерес как общенаучная категория и ее отражение в науке гражданского права// Государство и право, 1999, N 7. С. 86-87.

⁴¹Տե՛ս Мальцев Г.В. О субъективных публичных правах. // Материалы научной конференции „Интерес в публичном и частном праве”: Государственный университет-Высшая школа экономики. М. 2002. С. 13-14, Կարապետյան Ն.Ա.

Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում. իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան 2010, էջ 17-18: Հանրային և մասնավոր շահերի տարբերակման, դրանց փոխազդեցության և փոխապայմանավորվածության հարցերն ուսումնասիրության առարկա են դարձվել սկսած 18-19-րդ դարերից, և հանրային շահ հասկացությունը ժամանակի ընթացքում ենթարկվել է որակական-բովանդակային փոխակերպումների: Մասնավորապես, արդեն իսկ 18-րդ դարում հանրային շահը գերմանացի իրավագետների կողմից ներկայացվում էր ոչ այնպես, ինչպես ասենք հռոմեական իրավաբանների կողմից: Ավելի մանրամասն տե՛ս Петражицкий Л. И. Теория права и государства в связи с теорией нравственности. Серия „Мир культуры, истории и философии”. СПб.: Изд-во „Лань”. Санкт-Петербург, 2000. С. 508-520; Лекции по общей теории права. Коркунова Н.М. Книга 2. Объективная и субъективная сторона права. По изданию 1914 года. Редактирование и комментарии. (с) www.allpravo.ru – 2003.

⁴²Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ

հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահը ընկալելի, ընդունելի լինելու հանգամանք է: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Дедов Д. И. Конфликт интересов. М: Волтерс Клувер. 2004. С. 203, հղումն ըստ համացանցի <http://books.google.com/books?id=C3AEwN6XFOoC&pg=PR9&dq=what%20is%20the%20legal%20interest&hl=ru&pg=PR4#v=onepage&q=what%20is%20the%20legal%20interest&f=false> կայքի 01.07.2010թ. դրությամբ:

⁴³ Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա.

Վաղարշյանի-Եր: «Իրավունք», 2010թ., էջ 371:

⁴⁴ Հանրային շահի առարկան կազմող համընդհանուր բարիքների հասկացության, մասնավոր շահի և բարիքի հետ հարաբերակցության մասին ավելի մանրամասն տե՛ս Фридрих Август фон Хайек. Право, законодательство и свобода, современное понимание либеральных принципов справедливости и политики; пер. с англ. Б. Пинскера и А. Кутарева.- М.: ИРИСЭН. 2006. С. 169-176.

⁴⁵ Այս հանգամանքը առավել շատ ի հայտ է գալիս ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում, տե՛ս, օրինակ, Sangeeta Ahuja, People, law and justice: casebook on public interest litigation/ volume 2, published by Orient Longman Limited, New Dehli 1997 էջ 622-623, 700, հղումն ըստ համացանցի http://books.google.com/books?id=mvWzfNLRqoC&printsec=frontcover&dq=subject:%22Law%22,+public+interest&hl=ru&ci=uHdATLfhBJLk4gblPHADg&sa=X&oi=book_result&ct=result&resnum=3&ved=0CCwQ6AEwAg#v=onepage&q&f=false կայքի 01.07.2010թ. դրությամբ:

ՀՀ-ում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով սահմանված նորմերի կիրառման հետ կապված հանրանային շահի էության վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, 2006թ. ապրիլի 18-ի ՍԳ-Ո 630 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «Եթե սեփականությունն օտարվում է հասարակության կարիքների համար, անկախ նրանից, թե ինչ սուբյեկտի է (պետություն, համայնք, ֆիզիկական կամ իրավաբանական անձ) հետագայում օրենքով սահմանված կարգով անցնում գույքը, օրենքը պետք է սահմանի այնպիսի կարգավորում, որը երաշխավորի տվյալ գույքի օգտագործումը հասարակության այն կարիքների համար, որի հիմնավորմամբ կատարվել է օտարումը: ... Օրենքը պետք է սահմանի, թե ինչպես որոշել հասարակական եւ պետական կարիքը, ինչպես է հիմնավորվում, որ դրա՝ համարժեք փոխհատուցմամբ բավարարումը թելադրված է բացառիկ՝ գերակա հանրային շահով, ինչ կարգով այդ հիմնավորման մասին տեղեկացնել սեփականության իրավունքը կրողին, ինչպես վերջինս կարող է Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իր իրավունքների շրջանակներում դատական կարգով բողոքարկել ներկայացրած հիմնավորումը, երբ գտնում է, որ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը չի ապահովում «արդարացի հավասարակշռություն» հասարակության շահերի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտության միջև»: Հղումն ըստ համացանցի <http://www.concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-630.htm> կայքի 01.07.2010թ. դրությամբ: ՀՀ սահմանադրական դատարանն հանրային շահի հետ կապված հարցերին անդրադարձել է նաև իր 2010թ. հուլիսի 13-ի ՍԳ-Ո 903 որոշմամբ- հղումն ըստ համացանցի <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-903.pdf> կայքի 18.07.2010թ. դրությամբ:

⁴⁶ Իրավական կոնֆլիկտոլոգիայի, կոնֆլիկտի հասկացության, սահմանների առարկայի, օբյեկտի մասին ավելի մանրամասն տե՛ս Юридическая конфликтология /отв. ред. В. Н. Кудрявцев.- М., 1995. С. 5-37, Կոնֆլիկտների դիմամիկ ասպեկտի, դրանց՝ որպես սոցիալական գործընթացների մասին տե՛ս Կոնֆլիկտ: Վերլուծությունից մինչև միջամտություն /խմբ.: Ս. Չելդեյին, Գ. Գրաքման, Լ. Ֆասթ.- Եր.: Չանգակ-97, 2007, էջ 69-70:

⁴⁷ Հանրային իրավահարաբերությունից բխող վեճի հասկացության և հատկանիշների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Лупарев Е.Б. Понятие и признаки административно-правового спора // Журнал российского права. 2002. N 2. С. 44-51.

⁴⁸ Տե՛ս Фридрих Август фон Хайек. Право, законодательство и свобода, современное понимание либеральных принципов справедливости и политики. Пер. с англ. Б. Пинскера и А. Кутарева.- М.: ИРИСЭН, 2006. С. 120.